

**Ափսիւքին և մյուսներն ընդդէմ Միացյալ Թագավորության (Appleby and others v. the United Kingdom) Application no. 44306/98**

Թեմա՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածով ամրագրված իրավունքի պաշտպանությունն այլ անձանց միջամտությունից

Հարցը – պետության պոզիտիվ պարտավորությունը պաշտպանելու այլ անձանց միջամտությունից

Վճիռը՝ վեցը ձայնն ընդդէմ մեկի հարաբերությամբ – Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել

Իրավասությունը՝ ՄԻԵԴ, Միացյալ Թագավորություն

**Փաստական հանգամանքներ**

Առաջին, երկրորդ և երրորդ դիմումատուները բնակվում են Վաշինգթոնում /Մեծ Բրիտանիա/, իսկ չորրորդ դիմումատուն հանդիսանում է վերջինների կողմից ստեղծված բնապահպանական խումբ:

Վաշինգտոն քաղաքի կենտրոնը հայտնի է «Գալերիս» անվամբ և գտնվում է «Փոսթել Փրոփերթիս լիմիթեդի» /Փոսթել/ սեփականությունը հանդիսացող տարածքում: Քաղաքի կենտրոնը կառուցվել էր «Վաշինգտոն Դեվելոփմենթ քորփորեյշնի» /Քորփորեյշն/ կողմից, որը Մեծ Բրիտանիայի կառավարության կողմից և Խորհրդարանում ընդունված ակտի համաձայն ստեղծված կազմակերպություն է, որը ստեղծվեց: Ե «նոր» կենտրոնը կառուցելու համար: Կենտրոնը վաճառվել էր Փոսթելին 1987թ.-ին:

«Գալերիս»-ը, որի սեփականատերն էր Փոսթելը, ներառում էր խանութների շարք, մեքենաների կայանատեղի և զբոսայգիներ: Սակայն, տարածքում գործող զբաղվածության գործակալությունը և հանրային գրադարանը պատկանում էին քաղաքային խորհրդին, իսկ հիվանդանոցը և սոցիալական ծառայությունների կենտրոնը քաղաքային խորհրդին վարձակալությամբ հանձնել էր Պետքարտուղարությունը:

1997թ.-ին քաղաքային խորհուրդը կառուցապատման թույլտվություն տրամադրեց «Սանդրլենդ քոլեջին»՝ կառուցապատումներ իրականացնելու Վաշինգտոնի Աննե զբոսայգում, որը հայտնի է արենա անվամբ: Արենան միակ խաղահրապարակն է Վաշինգտոն քաղաքում, որից օգտվում են տեղական բնակչությունը: Առաջին, երկրորդ, երրորդ դիմումատուները, շահագրգիռ բնակիչների հետ հիմնեցին չորրորդ դիմումատուին՝ պայքարելու կառուցապատման և քաղաքային խորհրդի թույլտվության դեմ:

Առաջին դիմումատուն իր ամուսնու և որդու հետ «Գալերիս»-ի խանութների տարածքի մուտքի մոտ փակցրել էր երկու պաստառ՝ ահազանգելով հասարակությանը ազատ տարածքը կորցնելու և ստորագրություններ հավաքելով Վաշինգտոնի առաջին ֆորումի անունից քաղաքային խորհուրդ ներկայացնելու համար: Փոսթելի անվտանգության

ծառայողներն արգելեցին առաջին դիմումատուի և վերջինիս ամուսնու կողմից ստորագրությունների հավաքումը: Դիմումատուները պարտավորվեցին հանել պաստառները և դադարեցնել ստորագրահավաքը:

1998թ.-ի մարտ ամսին գիզամարկետներից մեկի ղեկավարը թույլատրեց դիմումատուներին տվյալ խանութում տեղադրել իրենց պաստառը և սահմանափակ թվով անձանցից ստորագրահավաք իրականացնել, սակայն նման թույլտվություն այլևս չտրամադրվեց 1998թ.-ի ապրիլ ամսին:

1998թ.-ի ապրիլին Վաշինգտոնի առաջին ֆորումի նախագահ հանդիսացող երրորդ դիմումատուն նամակ ուղարկեց «Գալերիա»-ի ղեկավարին՝ խնդրելով թույլատրել փակցնելու ստենդ և հավաքագրելու հասարակության կարծիքը: Նամակում նա առաջարկում էր նաև վճարել թույլտվության համար: Իր պատասխան նամակում «Գալերիա»-ի ղեկավարը հրաժարվեց թույլտվություն տրամադրել:

Չորրորդ դիմումատուն շարունակում էր պաստառների ամրացումը մայթերին և հին քաղաքի կենտրոնում, որտեղ, սակայն, շատ փոքրաթիվ էր բնակչությունը Վաշինգտոնի համեմատությամբ:

1998թ.-ի ապրիլի 30-ին դիմումատուները քաղաքային խորհուրդ ներկայացրեցին կառուցապատման դեմ 3,200 նամակներ, որոնք նրանք հավաքել էին բնակիչներից: Չորրորդ դիմումատուն ներկայացրեց այլ ասոցիացիաների կազմակերպությունների ցանկը, որոնք թույլատրել էին «Գալերիա»-ի ներսում ստորագրահավաք իրականացնել:

## **ՄԻԵԴ-ը**

Դատարանը վերահաստատում է խոսքի ազատության նշանակությունը ժողովրդավարական հասարակությունում: Ընդհանուր առմամբ, սույն իրավունքի արդյունավետ իրագործումը կախված չէ միայն չմիջամտելու պետության պարտավորությունից, այլ կարող է պահանջել պետությունից պոզիտիվ պարտավորություն պաշտպանելու այդ իրավունքը՝ նույնիսկ անհատների միջև փոխհարաբերություններում:

Պոզիտիվ պարտավորության առկայությունը որոշելու համար անհրաժեշտ է հավասարակշռել մի կողմից համայնքի կամ հասարակության շահը, իսկ մյուս կողմից էլ անհատի շահը: Նշված պարտավորության շրջանակը տարբեր է՝ հաշվի առնելով անդամ պետություններում առկա հատուկ իրավիճակները: Նման պարտավորությունը չպետք է մեկնաբանել մի եղանակով, ըստ որի անհնարին կամ անհամաչափ բեռ է դրվում իշխանությունների ուսերին:

## *Նշված գործը*

Փոսթելը դիմումատուներին արգելել է պաստառներ տեղադրել կամ թերթիկներ բաժանել «Գալերիա»-ի տարածքում: Փոսթելը հանդիսանում է մասնավոր ընկերություն, որի սեփականությանն է պատկանում խանութների կենտրոնը: ՄԻԵԴ-ը չի գտնում, որ պետական իշխանության մարմիններն ուղղակի պատասխանատվություն են կրում դիմումատուների

խոսքի ազատության սահմանափակումների համար: Դատարանին չի համոզում այն, որ պետությունը պարտավորություն ունի ելնելով այն փաստի ուժով, որ պետական զարգացման կորպորացիան գույքը Փոսթելին է հանձնել կամ էլ այն, որ դա իրականացվել է նախարարության թույլտվությամբ:

ՄԻԵԴ-ը պետք է որոշի, թե անդամ պետությունը թերացել է արդյոք իր պոզիտիվ պարտավորության կատարումը, այն է՝ պաշտպանելու դիմումատուների 10-րդ հոդվածի իրավունքն այլ անձանց միջամտությունից, այս դեպքում «Գալերիս»-ի սեփականատիրոջ միջամտությունից:

Կոնվենցիայով երաշխավորված իրավունքի բնույթը սույն դեպքում շատ կարևոր հանգամանք է:

Դատարանը նկատում է, որ դիմումատուները ցանկացել են գրավել իրենց համաքաղաքացիների ուշադրությունը՝ ընդվզելու կառուցապատման ծրագրի դեմ: Դա հասարակական հետաքրքրություն ներկայացնող հարց էր և նպաստում էր հասարակական քննարկմանը տեղական մարմինների կողմից իշխանական գործառույթների իրականացման առումով: Թեև խոսքի ազատությունը կարևորագույն իրավունք է, սակայն այն անսահման չէ: Սույն դեպքում, սակայն, այն չէր հանդիսանում ուշադրության արժանի Կոնվենցիայով երաշխավորված միակ իրավունքը: Պաշտպանության արժանի է նաև Արձանագրություն No. 1-ի 1-ին հոդվածով երաշխավորված սեփականության իրավունքը:

Ճշմարիտ է, որ ժողովրդագրական, սոցիալական, տնտեսական և տեխնոլոգիական զարգացումները փոխում են մարդկան տեղաշարժվելու և միմյանց հետ շփվելու բնույթը, սակայն ՄԻԵԴ-ը չի գտնում, որ դա ենթադրում է այլոց սեփական տարածքում մուտքի իրավունքի ապահովում կամ էլ մուտքի իրավունք բոլոր պետական հաստատություններում /պետական գրասենյակներ, նախարարություններ և այլն/:

Սույն գործում սահմանափակումը կիրառվել է միայն այն դեպքում, երբ դիմումատուներն արտահայտել են իրենց կարծիքը «Գալերիս»-ի մուտքի կետերում և միջանցքներում: Նրանց համար արգելք չի եղել առանձին թույլտվություններ ստանալն ստորագրահավաքի գործունեությունը ծավալելու «Գալերիս»-ի տարածքում գործող առանձին խանութներում կամ հին քաղաքում: ՄԻԵԴ-ը չի կարծում, որ Թոսթելի կողմից կիրառված արգելքը խափանել է դիմումատուների հնարավորությունն արտահայտելու իրենց կարծիքը համաքաղաքացիների շրջանում: Մոտ 3,200 քաղաքացիներ արտահայտել են իրենց կարծիքը:

Հավասարակշռելով խնդրո առարկա հարցերը և հաշվի առնելով կոնկրետ դեպքում կիրառված սահմանափակումները, ՄԻԵԴ-ը չի գտնում, որ պետությունը թերացել է իր պոզիտիվ պարտավորությունների կատարումը՝ դիմումատուների խոսքի ազատության իրավունքը պաշտպանելու առումով:

Այսպիսով, Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել: